

1 + 1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ 20 փետրվարի 2019 թ. թիվ 1 (1)

ԲԱՐԻ ԵՐԹ 1 + 1 ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԵՐԹԻՆ

Լույս է տեսնում կամ ծնվում է Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի մանկապատանեկան թերթը, որի էջերում լինելու են դպրոցականների հեղինակած հոդվածները, խոհերը, բանաստեղծությունները, ակնարկները: Հայաստանի հին ու նոր պատմության մեջ, թերեւս, սա կարող է լինել բացառիկ օրինակը, երբ կենդանի լրագրությունը ուսուցանվում ու ծավալվում է աշակերտական նստարանից, այն էլ՝ տպագիր խոսքի միջոցով, երբ մեր կյանքում արդեն առավել տիրապետող են դարձել էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցները: Գեղարքունիքի գյուղական դպրոցում թերթի հրատարակության կազմակերպումը կյանքի կոչվեց բարի կամքի շնորհիվ: Իսկ առավել հուսադրողը «1+1» թերթի էջերում տեղադրված նյութերն են, որոնք մտքի ուղղակի արգասիքն են Գեղարքունիքի դպրոցի աշակերտների: Սա առաջին



քայլն է, որին հաջորդելու են մյուս լուրջ, տեսանելի ու ծանրակշիռ քայլերը: Աշակերտների մոտ նկատվող ոգեւորությունը, ստեղծագործական ձիրքն ու եռանդը մեր վաղվա օրը, մեր սիրելի հայրենիքը կդարձնեն ավելի ստեղծագործ, ավելի ծաղկուն ու մաքուր, ավելի առողջացած արատավոր բարքերից ու նյութապաշտություն-

նից, հոգեւոր արժեքները սիրող ու գնահատող: Նրանք, որպես մեր ապագայի ազնիվ ու գիտակից քաղաքացիներ, կսովորեն ու կսովորեցնեն, կգարգացնեն ու առաջ կմղեն մեր համագային միտքն ու նպատակները, կհաստատեն մարդկային բարությունը: Այն դեպքում, երբ շատերն ակնկալում էին մարգային

տպագիր մամուլի դադարեցումը ճիշտ այնպես, ինչպես ոչ վաղ անցյալում փակվեցին շրջանային թերթերը, հիմա արդեն նման նեղմիտ մարդկանց ձեռնոց է նետում Գեղարքունիքի դպրոցում լույս ընծայվող «1+1» թերթը: Ու չենք բացառում, որ այլ համայնքներում էլ մարդիկ նախանձախնդիր կլինեն ու կյանքի կկոչեն դպրոցական այլ թերթեր՝ ձեւավորելով նոր ճաշակ ու նորովի մտածողություն:

«Գեղամա աշխարհ» թերթի խմբագրակազմը ոչ միայն ջերմորեն շնորհավորում է «1+1» թերթի ծնունդը, այլ նաեւ նրա կողքին է գտնվելու իր տարիների փորձով, գիտելիքներով ու խորհուրդներով, չընդմիջվող համագործակցությամբ:

Կանաչ ճանապարհ ու բարի երթ քեզ, մեր նորաստեղծ թերթ: Մենք տերն ու ծառան ենք քո հրաշալի ու պայծառ երկունքի:

«Գեղամա աշխարհ» թերթի խմբագրություն



ԵՐԿԱԹԻՑ ՀԱՅ ՔԱՄՈՂԸ

խատել է դարբին Վահագնը՝ նրա պապը, իսկ դարբին Վահիկը 4-րդ սերունդն է: Այն հարցին, թե նա ինչ էր ազել դառնալ, նա պատասխանեց.

- Երագել են դ ա ռ ն ա լ պատմության ուսուցիչ, սակայն երա-

Գեղարքունիք գյուղում բնակվող 62 տարեկան Վահիկ Գրիգորյանը, ով իր գործի նվիրյալն է, երկար տարիներ զբաղվում է դարբնությամբ: Դարբնի աշխատանքը Գեղարքունիք գյուղում գործել է 1920 թվականից, դարբնոցը եղել է «Չայի կրաղ» կղզվող հատվածում, որտեղ աշ-

զանքս անկատար մնաց Խորհրդային բանակ զորակոչվելու պատճառով:

Իսկ թե երբ է նա սկսել զբաղվել դարբնի գործով, նա պատասխանեց՝ 1973 թվականից ի վեր:

Իսկ թե ինչն էր պատճառը, որ,

իր երագանքի մասնագիտությունը թողնելով, ընտրեց դարբնի գործը, նա պատասխանեց.

- Դա մեր արյան մեջ է: Կուզենայի, որ երեխաներս նույնպես շարունակեն իմ գործը. հույս ունեմ, որ թոռներիցս զոնե մեկը կընդլայնի այն, և ապագա սերունդը կներգրավվի դարբնի աշխատանքում: Ես ուրախ եմ, որ համայնքին կարող եմ ծառայել որպես լավ դարբին, որով հետև գիտակցում եմ, որ ոչ բոլորը կարող են դառնալ դարբին: Այն հարցին, թե չի հոգնում արդյոք այդպիսի դժվար աշխատանք կատարելուց, նա ասաց, որ դարբնի գործը իր համար ոչ թե դժվար աշխատանք է, այլ յուրահատուկ արվեստ, որը ինքը գգում է հոգով: Նա այդ աշխատանքը համարում է «ոսկե» աշխատանք:

Իսկ այն հարցին, թե ինքն իրեն կատարյալ մասնագետ է

համարում, թե ոչ, նա համեստաբար պատասխանեց, որ դեռ սովորելու շատ բան ունի և վերջում հավելեց հին հույն փիլիսոփա Սոկրատեսի խոսքերը. «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»:



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Մերի Գրիգորյան



20 փետրվարի 2019 թ.

Գեղարքունիք գյուղն ունի հարյուրամյակների պատմություն:

Հիմնականում գաղթել են Մուշ, Սալմաստ և Խոյ գավառներից: Առաջին գաղթականները եկել են Մշո գավառից, որոնց օգնել է Մկրտիչ Արծրունին, ով եղել է Սևանի ավազանի գավառապետը: Նա Նազար Դավիդովին /Սարգսյանին/ ուղարկում է Բաշքյանը /ներկայիս Գեղարքունիք/ վերաբնակվելու: Նազար մեծը գավառապետի հովանավորությամբ տեղահան է անում թուրքերին, որոնք գյուղում կազմում էին քսանութ տնտեսություն: Հինգ տարի հետո գյուղը գրեթե բնակեցված է լինում հայերով: Նազար Դավիդովը հիմնում է ներկայիս Սարգսյանների տոհմը, որը գյուղում անվանում են Նազարենց կամ Դավիդենց: Նազար Դավիդովը ունենում է մեկ տղա՝ Գևորգը, իսկ Գևորգի տղաներն են Իսրայելը, Նազարը, Սարգիսը և Սևակը: Գյուղում ապրում են Սարգսի ժառանգները: Սարգիս ունենում է մեկ որդի՝ Դավիդը, իսկ Դավիդը երկու որդի՝ Սարգիսն ու Գրիգորը: Գրիգորը ուներ չորս որդի՝ Պապինը, Սեդրակը, Վազգենը և Զավենը:



և Ռաֆիկը, ովքեր ապրում են գյուղում, շարունակում են իրենց հոր գործը՝ հյուսնությունը: Գյուղում բնակվել է Սարգսի որդի Գուրգենը, որը նույնպես զբաղվել է ուսուցչությամբ, ունե-

ՏՈՀՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ.Ո՛Վ ԵՆՔ ՄԵՆՔ

/ Տեղեկացնում է քարտաշ Լևիկ /Գրետ/ Ղազարյանը /

Միայն Վազգենն է ապրել գյուղում և շարունակել է հոր գործը՝ ուսուցչությունը:

Դավիդի որդի Գրիգորը եղել է լիկկայանի վեց շրջանավարտներից մեկը, ով եղել է վաստակավոր ուսուցիչ, աշխատել է դպրոցում 1934 թվականից:

Սարգսի որդիներն էին՝ Գուրգենը, Միսակը, Կույան, Մերուժանը, Սերոժը: Գյուղում են մնացել Գուրգենը, Միսակը, Կույան: Միսակի որդին է Ժորան, ով ունի մեկ որդի: Կույան ուներ երկու որդի՝ Նազարը

ցել երեք որդի, որոնցից մեկն է ապրում գյուղում՝ Սամվելը և նրա որդին:

Բացի տղաներից՝ Սարգսյանների տոհմը ունեցել է նաև աղջիկներ, ովքեր ամուսնացել են գյուղում և ունեցել երեխաներ՝ շարունակելով իրենց ամուսինների տոհմը:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Սյուզաննա Կարապետյան



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 27-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԺԻՆ



2019 թվականի հունվարի 30-ին Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ համադպրոցական միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի 27-րդ տարեդարձին: Միջոցառմանը ներկա էին ծնողներ, ուսուցիչներ, Հայոց բանակից զորացրված տղաներ, Արցախյան պատերազմի մասնակիցներ: Միջոցառումն ուներ ռազմաօդային օդակայանի և մարտական պատրաստվածության մասին:

ու արի, իր տանն ու հայրենիքի պաշտպանությանը պատրաստ զինվորի հետագա կայացմանը, Հայոց բանակի նկատմամբ սիրո և հարգանքի ձևավորմանը: Ամենակարևորը՝ դպրոցականները պատկերացում կազմեցին Հայոց բանակի կազմավորման, նրա անցած մարտական ուղու, ժամանակակից զինված ուժերի, ռազմական տեխնիկայի և մարտական պատրաստվածության մասին:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐ

Ողջույն, սիրելի՛ զինվոր, մենք գիտենք, որ ձեզ համար չկա առավել բարձր ու սրբազան պատականություն, քան հայրենիքի պաշտպանությունը: Քո շնորհիվ է, որ մենք անհոգ ու հանգիստ ապրում ենք



մեր երկրում: Այդ պատճառով ամենափոքր երկիրն անգամ պետք է ունենա իր բանակը, քնաի որ նրա գոյությունն է ուժ ծնում, ծնում իրավունք և, ամենակարևորը, երկիրը պահելու հնարավորություն: Սիրելի՛ զինվոր, դու ես Հայոց բանակի հիմքն ու հենասյունը, բանակ, որը մի կառույց է, ոգեշունչ մի դարբնոց: Սիրելի՛ զինվոր, քո երկամյա չարչարանքը մեր ժողովրդի խաղաղ կյանքն արժե, թող խաղաղություն տիրի աշխարհին Հայոց, իսկ հայ մայրերի աչքերում շողան միայն ուրախության ու հպարտության արցունքներ՝ ողորված անսահման

սիրով ու երջանկությամբ: Իմ քաջ եղբայր, ես հավատում եմ քո տոկունությանն ու քաջությանը, քանի որ հայ զինվորի երակներով հոսում է ազատատենչ Հայկի և նրա ժառանգների արյունը: Եվս մի քանի տարի անց ես կկանգնեմ քո տեղը և կշարունակեմ քո գործը: Ես հավատում եմ քեզ, որ դու ամուր կպահես իմ երկրի սահմանները, որ պատվով կկատարես հայրենիքիդ ու հողիդ առաջ պարտքը, մինչև հեթափոխի կգամ ես...

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Սաշա Հակոբյան

ԲԱՆԱԿԻ ԻՄ ԱՉՔԵՐՈՎ

Ես գավակն եմ իմ լեռնային երկրի, որը Հայաստան է կոչվում: Երկիր, որը գոյատևելու համար մշտապես պայքարել է՝ ունենալով պատմական հերոսական պահեր, պահեր, որոնք անմահացրին մեր պապերը, հայրերը, հիմա էլ՝ իմ եղբայրները: Իմ ապրած օրերի այդպիսի հերոսական էջերից է Քառօրյա պատերազմը, որը խլեց բազմաթիվ հայորդիների կյանք և տվեց այնպիսի հերոսներ, ինչպիսիք են Արմենակ Ուրֆանյանը, Սասուն Մկրտչյանը, Ռոբերտ Աբաջյանը, Քյարամ Սլոյանը, որոնց սխրանքը օրինակ է բոլորիս համար: Ինձ համար յուրօրինակ հերոս է Արամայիս Յուրիկի Ոսկանյանը, ով հերոսացավ հայրենիքի սահմանները պաշտպանելիս և անմահացավ մեր սրտերում և գիտակցության մեջ: Ունենալով նմանօրինակ սխրանքներ և քաջարի բանակ՝ ես վստահ եմ,

որ պատկերել եմ մի նկար, որը շուտով իրական է դառնալու: Եվ գուցե մենք լուծելու ենք մեր տարածքային խնդիրները, և հայ հպարտ զինվորը Մասիսի լանջին հանգիստ ու անվտանգ մատուցելու է հարատևության խորհրդանշան՝ հանդիսացող կրակի շուրջ տաքանալու: Երկինքը լինելու է խաղաղ ու լուռ, իսկ այդ լռությունը կխախտի զինվորի նվազած երաժշտության ձայնը, չի լինի ոչ մի ոսոխ, ոչ մի կրակոց:

Իմ սիրելի՛ սահմանապահ եղբայրներ, վստահ եմ, որ շուտով իմ երազած բանակը ձեր շնորհիվ իրականություն է դառնալու, և որ նկարս ուսողիս չէ:

Ձեզ սիրող, ձեզանով հպարտացող, ձեր վերադարձին հավատով սպասող, ձեր գործը շարունակող՝ Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ **Դավիթ Ղազարյան**:





Զմռան ճերմակությունն ամենուր իշխող է, ամեն ինչ ծածկել է իր վերնակի տակ: Մերկացած ծառի տերևներին փոխարինել է արծաթագույն եղյամը: Քամին շարժում է եղյամապատ ճյուղերը: Գուցե ճիշտ են ասում, որ նրանք դողում են ցր-

նոյեմբեր ամիսներին: Չյունը խոնավ էր, անձրևախառն: Չյան փաթիլները խնձորենու ծաղկաթերթերի նման իջնում էին վար, ծածկում սար ու սարալանջ, հանդ ու արտ: Երկնքի ճերմակը ծուլվել էր երկրի ճերմակին, ստեղծվել էր համատա-

րած, անծայրածիր ճերմակության թագավորություն: Սկզբից բոլորին ցնծություն էր պարգևել անարատ ծյունը՝ իր անբասիր մաքրությամբ, իր անձայն երաժշտությամբ: Սակայն գյուղացիներից շատերի սրտում բնականաբար առաջացել էր անհանգստություն, քանի որ ձմեռն իր հետ բերում էր նաև նոր հոգսեր: Մեզ մոտ ձմեռն անկանոն է, այն կարող է սկսվել դեռ աշման կեսից և շարունակվել մինչև գարնան վերջը: Տարվա յուրաքանչյուր եղանակ գեղեցիկ է յուրովի, ձմեռն էլ իր հերթին ամբողջացնում է այդ գեղեցկությունը: Գեղարքունիքը միշտ է գեղեցիկ, բայց ձմռանը այն ավելի է գեղեցկանում, հատկապես երբ ծյունը իր սպիտակ սավանն է փռում ամենուրեք:

Չնայած ծյան «պարզևած» ցրտին, որը օրեցօր ավելի շատ հոգսեր է պատճառում, ամեն դեպքում ծյունը ջերմացնում է բոլորի սրտերը: Մեզ մոտ հնարավոր չէ պատկերացնել ձմեռային տոները առանց ծյան: Ամանորի անբաժան մասն է կազմում ծյունը. այն խորհրդանշում է մաքրություն, առատություն, իսկ ամանորի գիշերը տեղացած ծյունն ավելի խորհրդավոր է դառնում:

Պիտի առնվազն կույր լինել՝

1 + 1 3



20 փետրվարի 2019 թ.

Հնկատելու համար բնության այդ սովորական թովչանքը:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Մերի Գրիգորյան



ԶՄԵՌ



Զմեռ... մի հրաշալի եղանակ, որը յուրովի է իր առանձնահատուկ գեղեցկությամբ: Զմեռ... երկնքից թափվող ճերմակ փաթիլներ, գեղեցիկ ու արծաթափայլ փաթիլներ, որ երկնքից պարելով թափվում են ցած, թափվում և ամենուր ճերմակով ծածկում: Ու շուրջդ ասես ամեն-ամեն ինչ ճերմակով է ծածկվում, այնքան մաքուր և այնքան անբիծ, որ ասես հրաշք է տեղի ունենում: Չյան փաթիլի իջնելու ամեն մի վայրկյանը յուրովի է, գեղեցիկ: Զմեռը տարբերվում է մյուս եղանակներից իր առանձնահատուկ ծյան առկայությամբ: Զմեռն անցնում է հեքիաթի նման, ամենուր ծյուն է ու անվերջ տեղացող փաթիլներ: Զմռան ամեն մի վայրկյանը պետք է ապրել յուրովի և հասկանալ ձմռան առանձնահատկությունները:

Այն ավելի գեղեցիկ է իմ գյուղում՝ Գեղարքունիքում, երբ ամբողջ դաշտերն ու լեռները պատված են ծյունով, և ուրախություն է իջնում գյուղի վրա, կարծես բոլորն իրենց զգում են հանգիստ ու երջանիկ: Մարդիկ, ովքեր մեկնել էին արտագնա աշխատանքի, վերադառնում են և նորից իրենց ընտանիքի կողքին լինում:

Պարզվում է՝ կան մարդիկ, որոնք խորը վախ ունեն ծյունից, ինչը նույնիսկ անուն ունի՝ «կիռնոֆոբիա»:

Սովորական ծյան փաթիլը կազմված է միջինը 180 միլիարդ մոլեկուլից:

Իրականում ծյունն անգույն է, թափանցիկ, ոչ թե սպիտակ:

Չյան բյուրեղը պրիզմայի նման բաղադրում է լույսը, ինչը մարդու աչքին տեսա-

նելի չէ, ուստի մենք այն տեսնում ենք սպիտակ գույնով:

Երկրագնդի վրա գտնվող քաղցրահամ ջրի 80%-ը սառույցի կամ ծյան տեսքով է:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհիներ Սյուզի և Անի



ԵՐԱԶԱՆՔԻ ՀԵՏԵՎԻՑ



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Դանիել Գրիգորյանը, ով մեծ նպատակներ ունի իր առջև դրված, սոցիալապես անապահով ընտանիքից է: Չնայած սոցիալական վատ վիճակին՝ նա շատ երազանքներ ունի և պատրաստվում է դրանք իրականացնել: Այդ երազանքներից ամենամեծը փողային երաժշտական գործիք /կլարնետ/ նվագել սովորելն է: Թեև դպրոցում դրսևորում է բավարար առաջադիմություն, բայց շնորհալի է. ասումներում է, երգում և նվագում: Այն հարցին, թե ինչու է ընտրել երաժշտական ոլորտը, նա պատասխանեց.

«Քանի որ երաժշտությունը ներթափանցում է մարդու հոգին:

Իսկ այն հարցին, թե ինչու է հազարավոր երաժշտական գործիքներից ընտրել կլարնետը, նա պատասխանեց.

«Ոչ մի յուրահատուկ բան չկա. Չայնն ուղղակի ինձ դուր է գալիս:

Երբ նվագում եմ իմ սիրելի երաժշտությունը, ավելի եմ համոզվում, որ իմ ընտրությունը ճիշտ է: Հաճելի է, երբ զգում ես մեղեդին, քանի որ այդ դեպքում տրվում ես երաժշտությանը:

Բացի այն, որ երաժշտական այդ գործիքի ծայրը աննկարագրելի գեղեցիկ է, այն նաեւ հուզում է, ստիպում զգալ աշխարհը, տեսնել ավելին՝ գեղեցիկն ու իդեալականը, ուստի, ես իմ ապագան տեսնում եմ այս ոլորտում:

Իր երազանքը, ըստ նրա, իրագործելի է, և ինքը կանի ամեն ինչ իր երազանքը՝ իրականություն դարձնելու համար:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Մ. Գասպարյան





20 փետրվարի 2019 թ.

Չեմ ասի, որ գեղարվեստական գրականությունն ի սկզբանե ինձ գրավել է: Ես ունեցել եմ և ունեմ ուրիշ շատ հետաքրքրություններ, որոնցով զբաղվելիս ավելի մեծ բավականություն եմ ստացել, քան որևէ գիրք կարդալիս:

Դպրոցում ես սովորում եմ լավ, բայց գեղարվեստական գրքերի հետ շփվում եմ այնքանով, որքանով ինձ պարտադրում են ուսումնական ծրագիրը և ուսուցիչները:

Հիշում եմ դեռ տարրական դասարանում էի սովորում, դասդեկս ինձ հանձնարարել էր կարդալ «Չաղ-չաղ թագավորը» հեքիաթը, որը այն ժամանակ թվում էր մի հաստափոր գիրք, որ եթե ամբողջ կյանքում էլ կարդայի, չէի վերջացնի: Բայց այն ընդամենը երեքշաբթի փոքրիկ հեքիաթ էր, որից ես հիմա հիշում եմ միայն վերնագիրը:

Հայ հեղինակների վեպերից իմ ամենասիրած գործը Շիրվանզադեի «Քաոս» վեպն էր, բայց հետո ինձ գրավեց արտասահմանյան գրականությունը: Մեծ հետաքրքրությամբ եմ կարդացել Շարլոթ Բրոնտի «Ջեյն Էյրը», Օսկար Ուայլդի «Դորյան Գրեյի դիմանկարը» և այլն:

Վերջերս սկսել եմ կարդալ Վարդգես Պետրոսյանի գրքերը՝ «Ապրած և չապրած տարիները», «Վերջին ուսուցիչը», «Մենավոր ընկուզենին»:

ԻՄ ՍԻՐԱԾ ԳԻՐՔԸ



Իսկ Էդգար Հարությունյանի «Չգտնված երիցուկներ» գիրքը առանձնահատուկ դարձավ ինձ համար:

Ես անգամ մտապահել եմ շատ դիպուկ ար-

տահայտություններ այդ գրքից.

- Դու այդպես էլ չես գտնի քո երիցուկները, որովհետև նրանց փնտրում ես անցյալում, իսկ անցյալում ոչինչ հնարավոր չէ գտնել:

- Ձգացնումքը հագուստ չէ, որ խանութից գնես, հագնես կամ նվիրես ուրիշին...

- Ամեն լավ բանի հիմքում ինչ-որ մղիչ ուժ կա, որը հաճախ սեր է կոչվում:

- Սիրող սիրտը ատամներով էլ կպահի իր սերը:

- Խոսքը սրտի արձագանքն է ...

Իսկ Վարդգես Պետրոսյանի «Մենավոր ընկուզենին» ինձ շատ հոգեհարազատ դարձավ, քանի որ մեր օրերում էլ շարունակվում են գրքում արծարծված խնդիրները լուծում չստանալ:

Գյուղը դատարկվում է. ոմանք լքում են երկիրը, ոմանք էլ տեղափոխվում քաղաք:

Ինձ գրավում են գյուղում մնացող, գյուղը չլքող և պայքարող մարդիկ, ովքեր ամուր կառչած են իրենց հողին: Եվ հենց նրանք են մեր երկրի ամուր հիմքը, շարժիչ ուժը: Գիրքը կարդալուց հետո հասկացա, որ այսօր էլ Հայաստանի շատ գյուղեր, որքան էլ ցավալի է, դառնում են «գերեզմանագյուղեր»: Չէի ցանկանա, որ հայրենի հողը քաղցրամար միայն ծեր ծնողների կամ այլ հարազատների մահից հետո միայն:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Կարինե Բադալյան



ՊԱՊԻ ՈՒ ԹՈՌԱՆ ԶՐՈՒՅՑԸ

Մի անգամ պապ ու թոռ զրոսնում էին այգում և խոսում տարբեր թեմաների շուրջ, երբ թոռնիկը պապին ասաց.

-Պապիկ, ես շուն եմ ուզում:

-Ի՞նչ:

-Ասում եմ՝ շուն եմ ուզում, պապի՛, խլացե՛լ ես: -Դու ինձ արդեն հոգնեցրիր: Ախր ո՞նց կարելի է ամեն օր կրկնել նույն պատմությունը...

-Է՛, պապ, ախր շունը միշտ ինձ հետ կլինի, ցերեկները շան հետ կգամ դաշտ ու քեզ կօգնեն:

- Այ տղա, քեզ քանի անգամ եմ ասել՝ շան փոխարեն կարող ենք ավելի օգտակար կենդանի առնել, օրինակ՝ հավ, գոմե ձու կածի, կուտես ու սուս կանես:

-Պապի՛, չեմ հասկանում, դու ինձ չես սիրում, քո հավը իմ հետ գյուղ դուրս չի գա ու ընկերներիս չի վախեցնի:

-Չէ՛, տղա՛ ջան, քո գլուխը ոչ մի բան չի մտնում, ինչքան ասեմ-չասեմ, նույն էլն ես քշում: Հա՛, ի դեպ, էլ կարելի ա առնել:

- Ախր, ա՛յ պապ, ես քեզ չեմ հասկանում, շունը կարող է գյուղը պաշտպանել վայրի կենդանիներից:

-Տղա՛ս, ես ուզում եմ, որ դու հասկանաս՝ կյանքում ինչն է լավ, ինչը վատ քեզ համար:

-Լավ, պապի՛, կանենք ընենց, ոնց դու ես ասում, բայց մեկ է, քեզ չեմ հասկանում, երևի

կմեծանամ, կհասկանամ:

Սիրելի՛ ընթերցողներ, երբ դուք հայտնվեիք այդպիսի իրավիճակում, ինչպե՞ս կվարվեիք պապի կամ թոռնիկի փոխարեն:

Սպասում ենք ձեր առաջարկվող տարբերակներին:

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Սյուզաննա Կարապետյան Նկարը՝ ԱՆՆԱ ՓԱՌԳՅԱՆԻ



ԶԱՐԳԱՅՆԵՐԸ ԶՄԵՈՒՅՑԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԸ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտները, բացի ուսումնադաստիարակչական գործունեությունից, ներգրավված են նաև արտադասարանական խմբակների պարապմունքներում: Դպրո-

ցում կա վոլեյբոլի խմբակ, որտեղ մարզվում են 8-ից բարձր տարիքային խմբի տղաները: Չեզ կթվա, որ չափազանցում են, բայց դպրոցի երեխաների 90 տոկոսը ցանկանում է, անգամ երազում է ունենալ



նաև բասկետբոլի խմբակ, իսկ եթե աղջիկներին հարցնենք, նրանք տղաներից ավելի ոգևորված են մարզական խաղերով: Հարկ են համարում նշել, որ 2018 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ֆուտբոլի մեր աղջիկների թիմը Գեղարքունիքի մարզում գրավեց երկրորդ տեղը՝ չունենալով մարզման բավարար պայմաններ: Դպրոցում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, սակայն երեխաներից քչերն են այնտեղ հաճախում:

Կցանկանալիք, որ համայնքում զարգանան ծմեռային մարզաձևերը, հատկապես դահուկային և լեռնադահուկային մարզաձևերը, եթե հաշվի առնենք բնակլիմայական միջավայրն ու պայմանները: Կուզե՛ինք նաև, որ մեր համայնքում իրականացվեր պարի, երգի, արվեստի այլ տեսակների մասսայականացման ծրագիր:

Արդեն լույս է տեսել «1+1» թերթի առաջին համարը, որը խմբագրվում է Գեղարքունիք համայնքում: Թերթում լուսաբանվել են փաստեր, տեղեկություններ, իրադարձություններ, որոնք ներկայացնում են Գեղարքունիք համայնքը: Նյութերը վերաբերում են հայրենի բնաշխարհին, պատմամշակութային հուշարձաններին, տեսարժան վայրերին, գյուղի ծագումնաբանությանը, գյուղում նշանավոր դեմքերին, անցուդարձին, սովորույթներին, դպրոցում անցկացվող միջոցառումներին: Թերթի շնորհիվ ոչ միայն Գեղարքունիք գյուղի բնակչությունը, այլև շրջակա գյուղերի բնակիչները կկարողանան ստանալ տեղեկություն մեր համայնքի վերաբերյալ: Թերթը ավելի ճանաչելի կդարձնի Գե-

ղարքունիք համայնքը, վեր կհանի գյուղի խնդիրները, յուրովի կներկայացնի պատմությունը, որը շատերի մոտ կարող է հետաքրքրություն առաջացնել և, ով գիտի, տարիներ անց մեր փոքրիկ գյուղը կդառնա զբոսաշրջության զարգացման կենտրոն: Թերթի հրապարակման համար աշխատում է աշակերտներից կազմված խումբ, սակայն յուրաքանչյուր ոք կարող է ցանկության դեպքում դիմել Ռոզա Հակոբյանին և տրամադրել նյութեր, որոնք կցանկանալին տեսնել թերթի հաջորդ համարներում: Ցանկալի է, որ տրամադրվող նյութերում լուսաբանվեին համայնքում առկա խնդիրները և առաջարկվեին լուծումներ:

Ակնկալվում է ակտիվ համագործակցություն:

Խմբագիր և համարի պատասխանատու՝
Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 300
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru